

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

20.04.2018

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 21 անդամներից 19-ը

### ՕՐԱԿԱՐԳ

1. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:  
/Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/
2. Նախապաշտպանությունների արդյունքների ամփոփում: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/
3. Ընթացիկ հարցեր:

### ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցողը ներկայացրեց 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները: Զեկուցողը նշեց, որ կատարված կանոնակարգային փոփոխությունների արդյունքում այս կիսամյակում ավարտական կուրսի ուսանողները չունեն ընթացիկ քննություններ և ստուգումներ (Ըստ ուսումնական պլանի 8-րդ կիսամյակում նախատեսվում են միայն հանրագումարային քննություններ): Նա նշեց, որ 1-ից 3-րդ կուրսերում քննաշրջանը կազմակերպված էր պատշաճ կերպով, քննություններն ու ստուգումները իրականացվել են ժամանակացույցի համաձայն: Շեշտվեց, որ ֆակուլտետի դասախոսները նկատելիորեն կատարելագործել են թեստերը: Ուսանողների կողմից հարցաշարերի հետ կապված խնդիրները լուծվել են ժամանակին և տարաձայնություններ չեն եղել:

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց ֆակուլտետում երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրված ակադեմիական պատկերը.

Պատմություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.05

վճարովի և 4.05 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 6.48, իսկ անվճարում՝ 7.57 միավոր:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.39 վճարովի և 4.34 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 7.82, իսկ անվճարում՝ 9.42 միավոր:

Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.45 վճարովի և 3.38 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 6.58, իսկ անվճարում՝ 8.19 միավոր:

Հոգեբանություն մասնագիտության 3-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.00 և 7.18 միավոր:

Օտար լեզու և գրականություն մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննություններից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.87 միավոր վճարովի և 3.94 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 6.60, իսկ անվճարում՝ 8.22 միավոր:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.93 վճարովի և 4.38 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 5.61, իսկ անվճարում՝ 9.00 միավոր:

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.00 վճարովի և 2.17 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 5.70, իսկ անվճարում՝ 5.83 միավոր:

2017-2018 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.87 վճարովի և 3.93

անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 6.60, իսկ անվճարում՝ 8.22 միավոր:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

*Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:*

### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

*- 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները համարել բավարար:*

### **ԼՍԵՑԻՆ.**

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցողը մանրամասն ներկայացրեց ավարտական աշխատանքների կատարման ընթացքը և նախապաշտպանությունների արդյունքները: Ձեկուցողը ներկայացրեց, որ ԵՊՀ-ն փոփոխություններ է մտցրել և ներկա ուսումնական տարում և ավարտական կուրսի ուսանողները այլևս չեն հանձնի ամփոփիչ ատեստավորման քննություն և կունենան միայն ավարտական աշխատանքի պաշտպանություն:

Նա նշեց, որ նախապաշտպանությունների արդյունքում որոշ աշխատանքների կատարման ընթացքում ուսանողների մոտ ծագել են խնդիրներ և դժվարություններ: Նկատված թերությունները հնարավոր միջոցներով շտկվել և վերացվել են:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 17 ուսանող, իսկ ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ՝ 14 ուսանող: Ըստ զեկուզողի հաղորդման՝ ուսանողների գերակշիռ մասը կատարել է աշխատանքի 50-60%-ը:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 6 ուսանող՝ հայ գրականությունից: Ուսանողների ճնշող մասը կատարել է աշխատանքի 70%-ը:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությունից ավարտական աշխատանքի թեմաները բավականին հաջող են ընտրված և արդիական են: Դրանք գերազանցապես ունեն էքսպերիմենտալ բնույթ: Ավարտական աշխատանք է գրում 10

ուսանող: Ուսանողների մեծ մասը հասցրել է կատարել տեսական գրականության վերլուծություն և շարադրում: Ինչպես նաև կատարել են հետազոտական մեթոդների հավաքագրում, համակազմի ընտրություն, արդյունքների քանակական վերլուծություն: Նրանք գտնվում են վերջնական վերլուծությունների և եզրակացությունների շարադրման փուլում:

Պատմություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 19 ուսանող: Ուսանողների մեծ մասը ժամանակին հայթայթել է անհրաժեշտ գրականությունը, ճշտել աշխատանքի կառուցվածքը և այժմ շարադրանքի փուլում է: Կան ուսանողներ, որոնց աշխատանքի կատարման ընթացքը անբավարար է, նրանց հետ պետք է տարվի անհատական օգնության աշխատանք:

Մասնակի բացառություններով ավարտական աշխատանքների կատարման ընթացքը բավարար է: Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում ունենալ այն ուսանողներին, ովքեր դեռևս բավարար աշխատանք չեն կատարել, հանդիպել նրանց գիտական ղեկավարներին, հարկ եղած դեպքում այս գործում ներգրավել նաև ամբիոնի այլ դասախոսների:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

*Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ռ. Միրզոյանը, մ.գ.թ., Լ. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Մարիատյանը:*

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*2017-18 ուստարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը համարել բավարար:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱԲ

Ա. Ներսիսյան

Վ. Աղաբաբյան